Արձանագրություն N5

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի աճուրդի արդյունքների գնահատման նիստի

ք. Երևան 5 նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Ա. Խուդինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան

1.Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և նիստը կասեցնելու վերաբերյալ

Հանձնաժողովն ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, պարզեց, որ տեխնիկական բնութագիրը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետով որոշեց՝ նիստը կասեցնել՝ առաջարկելով «Հրաշք այգի» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Հաջորդ նիստը տեղի կունենա 07.11.2018թ. ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. 07.11.2018թ. ժամը 11:00-ին «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսելու վերաբերյալ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկվել է առկա անհամապատասխանությունը, ուստի Հանձնաժողովը որոշեց՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Անգործության ժամկետի վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

Ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում կիրապարակվի ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեռյան

_____ Ա. Խուդինյան

Քարտուղար՝ _____ Ա. Գրիգորյան